2163

C. 1930/111
30 MAY

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք.

№ 2 ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

# ՃՈՒՏԻԿՆԵՐԸ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



891.99 Մ
Դ-26

1928 Թ. ԹԻՖԼԻՍ

891.99մ
Դ-26

I



— Կտախ-կա՛-կա՛...
Կտախ — կա՛ — կա՛...
— Ի՞նչ կա, ի՞նչ կա,
Ա՜յ կըռկռան...
Աղջի Մա՛րի,
Մի տես, ի՞նչ է էդ չալ մարին
Ձենը գցել բակ ու կտուր,
Թե սոված է՝ մի քիչ կուտ տուր։
Ու Մարիկան վազեց, բռնեց,
[illegible]ւեկի փորը անդղեց։
— Վո՜ւյ տատի ջան, մի տես, մի
տես,
Փորը կրակ լինի սաես...
Խեղճ իմ հավիկ,
Դու իմ լավիկ,
Հիվանդ ես դու...
Ո՜ւ, ո՜ւ, ո՜ւ, ո՜ւ...
— Ի՞նչ ես լալիս, ա՜յ դու խելառ...
Թուխս է գալի, վոր քեզ հա-
մար
Ճուտեր բերի փափլիկ, թմբլիկ...
Զալպոտիկ, խատ-խատուտիկ...
Դե՛, շո՜ւտ, գնա՛,
Ինչքան ձու կա—
Գոգդ ածա, բե՛ր,
Դնենք տակին, հանի ճուտեր։
Ու թուխս դրին չալ հավիկին,
Բսան հատ ձու դրին տակին։
— Դե՛, Մա՛րի ջան, կուտ տուր
դու, կո՛ւտ,
Վոր մեր թուխսը քեզ պարգևի
քսան հատ ճուտ։

Ա
ԱՁ2235



II

Յերեք շաբաթ էլ կուտ, էլ ջուր,
Ցորեն, գարի, կորեկ բուռ-բուռ
Մեր Մարիկան հա բերեց ու թըխ-
սին տվեց,
Վերջին օրն էլ պար-պար եկավ
ու ծափ տվեց,
Յերբ վոր տեսավ թե վոնց ենպես
Թխսի տակն են լցվել պես-պես —



Սիպտակ, դեղին, չալիկ-մալիկ,
Խոպոպավոր խատ-խատուտիկ,
Պստիկ կտուց, բարակ տոտիկ,
Փափուկ մազով, աղվամազով՝
Ճուտ-ճուտիկներ թեթև վազքով։
— Վո՜ւյ, տատի ջան, ինչքան
շա՜տ են։
Պա՛հ, պա՛հ, հալա քա՜նի հատ
են...
Մեկ, յերկու... տասնինը։
Բա մի՞նը՛...
— Հլա մի տես, տակին ձու կա՞։
— Ըհը՛, հրես. համա՛... լակ ա։
— Դե՛, բան չկա.
Դու լա՛վ մտիկ մնացածին,
Վոր չտանեն—կատու, ագռավ,
բազե կամ ցին։

29 MAR 2013

8175



III

— Ծի՜, ճի՜, ճի՜, ճի՜…
Ծու՜, ճու՜, ճու՜, ճու՜…
Ման են գալի, քուջուջ ա-
նում,
Քիթ են կոխում ամեն բա-
նում
Ծուտիկները ճռճռալով՝
Մոր յետևից վավռալով։
— Եսպես էլ ցա՛վ…
Վոր ասել են — աներես հավ՝
Ես են, վոր կան.



Ինչքան խոկես, էլի կըղան։
Ծի՜, ճի՜, ճի՜, ճի՜…
Ծու՜, ճու՜, ճու՜, ճու՜…
Քի՜շ, քի՜շ կորեք,
Հերիք մարդու հոգի հանեք.
Ինչ եք ձգում — «ճի-ճու, ճիճու»…

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅՍՍՌ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

60651. 67



Ծիճուն հրեն, աղբահարում,
ձորի միջին։
Հայա մի ես վոչ ու փուչին…
Խառնեց իրար փաթիլ ու թել,
Ծրտոտել է բուրդ ու մթել։
Մի տես… քի՜շ, քի՜շ…
Ա՛ փի՜շտ, ա՛ փի՜շտ…
Ա՜յ, սատկես դու,
Մռռան կատու,
Ծուտ ես բռնում մկան տեղակ,
Հրես ջանդ շինեմ լեղակ…

IV

Ծուտիկները — ճը՛ա, ճը՛ա, ճը՛ա,
Կըռռան թուխսը — կը՛ա, կը՛ա,
կը՛ա,
Հա՛ վազեցին դեպի ձորը,
Դեպի պարտեզ, աղբահորը,
Քուջուջ արին, քրքրեցին,
Աղբաճիճու դուրս հանեցին,
Հա՛ քաշեցին, քաշքշեցին…
— Ա՛ղջի, մի տե՛ս, ո՞ւր կորան, ո՞ւր,
Եդ ճուտերը ճաճտալով.
Հրեն մի տե՛ս, մի մեծ ուրուր
Պտտում է թևին տալով։
Բայց Մարիկան դեռ չեր վա-
զել,
Դեռ ճուտերին նա չեր հասել,
Յերբ ուրուրը մին էլ հանկարծ՝
Գյուլլի նման սուրեց, վզզաց,
Ու հարձակվեց, թե վոր տանի,
Թմբլիկ ճուտի հոգին հանի։
— Հե՜յ-հե՜յ, տարա՛վ, տարա՛վ, տա-
րա՛վ,
— Ա՜յ սև ուրուր, ա՛յ անիրավ…

— Կղա՛ք-կա-կա, կղա՛ք-կա-կա—
Ճչաց Թուխսը—յեկե՛ք, ո՜վ
կա...
— Հա՛փ, հա՛փ, հա՛փ, հա՛փ, հա՛մփու,
հա՛մփու,
— Բռնե՛, շուն ջան, ա՜յ իմ գամ-
փռ...
Տատը վազեց ձեռին մի փետ,



Պստիկ Մարգոն փիսիկի հետ,
Վրա տվին քարով, փետով,
Աշոտիկն էլ իրեն նետով։
Վրա տվին ու փախցրին,
Սև ուրուրին լա՜վ թացրին։

V

— Ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ, քանի՞ ջուխտ...
Ա՛ղջի, հա՛շվի, ա՜յ Զմրուխտ.
Հո չտարա՞վ են անտերը,
Թաղեմ նրա հերն ու մերը։



— Իննը ջուխտ ա ու մի կենտ։
— Իննը ջուխտ ա ու մի կե՞նտ...
Ես տատիկին, ես պապիկին,
Ես Մարգոյին, ես Մարիկին.
Ես Աշոտին, ես Վաչիկին,
Ես Զմրուխտին, ես Հրաչիկին,
Ես Սոնիկին, ես Վանոյին,
Ես Կիմիկին, ես Անոյին,
Ես Նունիկին, ես Արտիկին,
Ես Նազիկին, ես հայրիկին,
Ես Վարսիկին, ես մայրիկին,
Իսկ ես մեկն էլ—Հոկտեմբերիկին։
Հա՛, թամամ է. տարե՛ք, տարե՛ք,
Դե՛, կանչեցե՛ք ու կուտ տվե՛ք,
Ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ, ա՜յ ճրտ-
ճրտան,
Դե՛, շուտ յեկե՛ք, ձեզ կուտ
կտան։



ՀՀ Ազգային գրադարան
NL0395963

ԳԻՆԸ 15 ԿՈՊԵԿ

# ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

## ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

1. *Մինխարներ, պիես 1 գործ. (սպառ.). . . . 50 կ.*
2. *Յարն ու Մուրճը, — հեքյաթ (սպառ.) . . . . 50 կ.*
3. *Շահ Զադեյի աքասին, — արևելյան լեգենդ (սպառ.). 10 կ.*
4. *Ծուտիկները . . . . . . . . . . . . 15 կ.*

*Հեղինակի հասցեն՝* Тифлис, Абас-Абадская пл. № 7.

Գրաւեսլար 1114. Պատվեր 1455 Տիրաժ 1200

Թիֆլիս, Ժ. Տ. Գ. Խ. Պոլ. Տրեստի 6-դ տպ., Կեցխովելի փ. № 3.